ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

«Լումայ»ի հրատարակութիւնը ներկայ թուին 6 ամիս ուշ ենք սկսում խմբագրութիւնից միանգամայն անկախ պատճառներով։ Անցած յունուարի 11/12-ին անակնկալ կերպով հրդեհ ծագեց այն բնակարանում, ուր գտնւում է մեր խմբագրատունը և մեծաքանակ ֆնասի հետ՝ լափեց Թերթիս մի քանի ամսուայ համար պատրաստուած խոշոր յօդուածները, և մենք հարկադրուած եղանք փոքր առ փոքր վերականգնել մեր դրութիւնը. և այսօր հնարաւորութիւն ունինք վերսկսել «Լումայ»ի հրատարակութիւնը նախկին ձևով։ Պակաս համարների փոխարէն մենք այս տարի կը լրացնենք զանազան յաւելուածներով։

Այս համարի հետ մենք ուղարկում ենք մեր բաժանորդներին 1. Բէն Հուր մեծ վէպի թարգմանութիւնը, թարգմ. Տիրայր վարդապետի. 2. Գ. Աղանեան ա. ք.-ի Աւետիս Ղուկասեան եւ նրա կտակը գրքոյկը և 3.-Ծղիա վ. Հասանջալալեանի պատասխանը Երուանդ վ. Տէր-Մինասեանին։ Այս վերջինը ուղարկւում է մեր բաժանորդներին հանգ. հեղինակի յատուկ ցանկութեամբ և խնդիրքով։

Այս տարի այս և ուրիշ ձրի յաւելուածներով մենք կը բաւարարենք մեր բաժանորդներին, իսկ առաջիկայ 1912 թուից Լումայի հրատարակութեան XVII տարուց—«Լուման» կհրատարակուի բոլորովին այլ դիրքով և ծրագրով, որի մասին կծանուցուի իւր ժամանակին։